

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՏԱՇԵՐՋԱՆՆԵՐ

Ն. ՅԱ. ՄԱՌԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

Հայկական ՍՍՌԻ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի 1964 թ. դեկտեմբերի 21—22-ը կայացած հորելյանական գիտական նստաշրջանը նվիրված էր բազմալաստակ գիտական, խոշոր հայագետ Նիկողայոս Յակովլևիչ Մառի ծննդյան հարյուրամյակին:

Ներածական հակիրճ խոսքով գիտական նստաշրջանը բացեց ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Մ. Գ. Ներսիսյանը:

Նստաշրջանում Ն. Յա. Մառի կյանքի և գիտական գործունեության վերաբերյալ կարդաց-վեցին մի շարք զեկուցումներ: Առաջինը՝ «Ն. Յա. Մառի Անիում կատարած հնագիտական պե-դումները» թեմայով հանդես եկավ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի դիրեկ-տոր, դոկտոր-պրոֆեսոր Բ. Առաքելյանը, որը մի շարք փաստերով բնութագրեց այն շնորհա-կալ ու քրտնաջան աշխատանքը, որ տարիների ընթացքում անխնշ կերպով կատարել է Ն. Յա. Մառը ինչպես Անի քաղաքում, այնպես էլ Հայաստանի այլ վայրերում:

Գիտական նստաշրջանի մասնակիցները մեծ հետաքրքրությամբ լսեցին գրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ղանա-յանյանի՝ «Ն. Յա. Մառը և հայ բանահյուսությունը» թեմայով զեկուցումը: Նա բանասեր-գիտ-նականների ուշադրությունը հրավիրեց Մառի թողած հարուստ. ժառանգությունը, հատկապես ժողովրդական բանահյուսությունը, խորությամբ ուսումնասիրելու վրա: Նշեց, որ արժեքավոր են Ն. Յա. Մառի այն գիտողությունները, որոնք վերաբերվում են տարբեր ժողովուրդների միջև եղած բանահյուսական աղբյուրներին, ինչպես նաև Հայաստանում և այլ վայրերում ի հայտ բեր-ված քարե վիշապների և մատենագրական աղբյուրներում հիշատակված վիշապազուներին ժա-մանակագրական թվագրության հարցերին:

«Հայկական վիճագրությունը Ն. Յա. Մառի գնահատմամբ» թեմայով զեկուցում կարդաց հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայ վիճագրության սեկտորի վարիչ, պատմա-կան գիտությունների թեկնածու Ս. Բարխուդարյանը: Զեկուցողը նշեց, որ Ն. Յա. Մառը ոչ միայն հմուտ լեզվաբան էր, պատմաբան, հնագետ, այլև նշանավոր վիճագրագետ: Անիում կա-տարած հնագիտական պեդումների ժամանակ Մառը հավաքել և հրատարակության է պատ-րաստել վիճական արձանագրությունների մի ժողովածու, որը տարաբախտաբար կորել է ա-ռաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Սակայն Մառի արխիվում չնշին քանակու-թյամբ պահպանվել են մեծ երախտավորի հիշյալ ժողովածուի առանձին պատասխիկները:

«Ն. Յա. Մառը և հայ-վրացական բանասիրությունը» ծավալուն զեկուցմամբ հանդես եկավ գրականության ինստիտուտի գիտական աշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Պ. Մուրադյանը, որն արխիվային և տպագիր նյութերի հիման վրա ցույց տվեց, թե ինչ հսկա-յական դեր է խաղացել Մառը հատկապես կովկասագիտության, հայ-վրացական բանասիրու-թյան զարգացման գործում:

Նստաշրջանի մասնակիցները լսեցին պատմական գիտությունների դոկտոր Աս. Մնացա-կանյանի հակիրճ հաղորդումը այն մասին, թե ինչպես առաջին համաշխարհային պատերազմի առթիվներին Մառը ուսական կայսրության համապատասխան մարմիններից, մեծ դժվարու-թյամբ, թույլտվություն ստանալով կարողանում է շարունակել պեդումները մասնավորապես Հան քաղաքում (1916 թ.):

Դեկտեմբերի 22-ի նստաշրջանում պրոֆեսոր-դոկտոր Կարո Մելիք-Օհանջանյանը բովան-դակալից զեկուցում կարդաց «Աղաթանգեղոսի աղբյուրների հարցի շուրջը» թեմայով: «Աղա-թանգեղոսի «Հայոց պատմության» նորահայտ արարական խմբագրության» վերաբերյալ զե-կուցեց ԳԱ պատմության ինստիտուտի գիտական աշխատող, պատմական գիտությունների թեկ-նածու Ա. Տեր-Ղևոնդյանը, «Հայ միջնադարյան առակների ուսումնասիրության պատմու-թյունից» թեմայով՝ բանասիրական գիտությունների թեկնածու էմ. Պիվազյանը:

